ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Մայիսի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց օտարերկրյա պետություններում պաշտոնավարող ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարներին՝ առաջնորդությամբ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարի գալուստ մաղթեց ներկաներին Մայր Աթոռ՝ արժևորելով և բարձր գնահատելով նրանց աշխատանքն ու գործունեությունը:

«Գնահատելի է, որ խորհրդաժողովից հետո Ձեր քայլերն ուղղել եք Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Հայոց Հայրապետից և 1700-ամյա մեր Եկեղեցուց օրհնություն ստանալու համար: Արտերկրում մեր պետության դիպլոմատիկական և հյուպատոսական ներկայացուցիչները ոչ միայն բարձր են պահում վարկը հայրենի մեր պետության, ոչ միայն իրենց անդուլ աշխատանքով նպաստում միջպետական հարաբերությունների զարգացմանը, այլ նաև իրենց ծառայությամբ ներդրում ունենում մեր ժողովրդի առջև ծառացած այն բոլոր կարևոր խնդիրների լուծմանը, որոնց համար անհրաժեշտ են ստույգ պետությունների և միջազգային հանրության վերաբերմունքն ու մոտեցումը»,- նշեց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց այն սերտ հարաբերությունները, համագործակցության և սիրո ոգին, որ առկա են տարբեր պետություններում պաշտոնավարող հայ դիվանագետների և արտերկրում սպասավորող հոգևոր դեսպանների՝ Հայ Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդների ու հոգևորականների միջև, որոնք հա-

մատեղ ջանքերով փորձում են իրականացնել այն խնդիրները, որոնք առաջադրված են մեր պետության, ինչպես նաև մեր առաքելահիմն Սուրբ Եկեղեցու կողմից:

Ներկաների կողմից Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը նշեց. «*Վեհափառ Տեր, վստահ եմ, որ Ս. Էջմիածին այցելությունը կարևոր էր բոլորի համար, քանզի այն վերակենդանացնելու է մեր ազգային նվիրական զգացումները: Եվ մենք վերանորոգված և Ս. Էջմիածնի օրհնությունն ստացած՝ առավել նախանձախնդրությամբ լծվելու ենք մեր առաքելության իրականացմանը*»: